



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 02 » _____ 11 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-478

**Հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 1-ը դիտված հիդրոօդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Ողջ շաբաթվա ընթացքում հանրապետությունում դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հոկտեմբերի 26-ին, 29-30-ին բարձր է եղել նորմայից 3-6, 27-28-ին՝ բարձր 1-3, հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 1-ին՝ բարձր 5-8 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում +27...+30°C, Տավուշում՝ +24...+28°C, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +21...+26°C, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +17...+22 աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը շաբաթվա ընթացքում գրանցվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ 0...+5 °C (Աշոցքում՝ -4°C, Սիսիանում, Սիսիանում՝ -3°C, Գավառում, Մարտունիում՝ -2°C), Տավուշում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ +3...+8°C (Դիլիջանում՝ +20C), Տավուշում՝ +8...+12C (Դիլիջան՝ +10C):

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել՝ 1900.59 մ (01.11.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 6 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան